BBC MA-ը իրականացրեց վիդեոպատմությունների ստեղծման սկզբունքների վերաբերյալ դասընթացներ Ֆակտոր TV-ի և Հետք-ի համար

Հոկտեմբերը «Եվրոպական մեդիա հարթակ Հայաստանում» ծրագրի հայաստանյան գործընկերների համար սկսվեց մարդակենտրոն վիդեոպատմությունների ստեղծման սկզբունքների ուսումնասիրությամբ:

BBC-ի բազմակի մրցանակակիր վիդեոլրագրող և օպերատոր Ջոնի Ռադերֆորդը աշխատել է հեռուստատեսային ոլորտում ավելի քան 30 տարի: Վերջերս նա BBC Media Action-ի նախաձեռնությամբ այցելել էր Հայաստան՝ «Հետք»-ի և «Ֆակտոր Թիվի»-ի լրագրողների համար նկարահանումների նորարարական մոտեցումների և վիդեոպատմությունների ստեղծման սկզբունքների վերաբերյալ դասընթացներ իրականացնելու նպատակով:

«Ֆակտոր թիվի»-ի լրագրող Անահիտ Հակոբյանը նշում է. «Մեզ համար շատ հետաքրքիր էր ուսումնասիրել վիդեո պատմություններ ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական մոտեցումները փորձառու լրագրողի տեսանկյունից: Հատկանշական էր նաև բացահայտել, որ շատ հարցերի նկատմամբ մեր և բրիտանական առաջատար լրատվամիջոցի մոտեցումը նույնն է»:

Տեսական դասընթացներից և քննարկումներից հետո մասնակիցները ուղևորվեցին գործնական նկարահանումներ իրականացնելու: Դասընթացի ողջ ընթացքում լրագրողները հնարավորություն ունեցան կիսվելու սեփական փորձով և պատմելու հայաստանյան կոնտեքստում նկարահանումներ իրականացնելու առանձնահատկությունների մասին:

«Եռօրյա ակտիվ դասընթացի ընթացքում մենք մի-շարք կարևոր, նորարարական գործիքների մասին սովորեցինք: Հասցրինք խոսել տեսական առանձնահատկությունների մասին, իրականացրինք նկարահանումներ և մոնտաժային աշխատանքներ: Իմ կարծիքով, գործնական աշխատանքները և տեղում մասնագետի կողմից աշխատանքի վերաբերյալ կարծիք լսելը ամենալավ փորձառությունն է». նշում է «Հետք»-ի վիդեո-ֆոտոլրագրող Անի Սարգսյանը:

***

«Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. հուսալի և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցում» ծրագիրն իրականացվում է Դոյչե Վելլե Ակադեմիայի, Հետք / Հետաքննող լրագրողներ ՀԿ-ի, ԲիԲիՍի Մեդիա Էքշնի, Բաց հասարակության հիմնադրամներ. Հայաստան-ի և Ֆակտոր Թիվի-ի հետ համատեղ՝ Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման (BMZ) նախարարության ֆինանսավորմամբ: